«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և դաստիարակության հարցերում»

Հետազոտող ուսուցիչ՝ Մելիքսեթյան Մարինե

Դպրոց՝ *« Զարթոնքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ*

Մենթոր ուսուցիչ՝ Իսկանդարյան Անի

ԱՐՄԱՎԻՐ- 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն ……3

2. Ծնողավարություն ……5

3.Հետազոտության թեմայի արդիականությունը ……5

4. Հոտազոտության նպատակը ……6

5. Հետազոտության խնդիրը……6

6. Գրական ակնարկ ……7

7. Ծնողական ժողովների դերն ու նշանակությունը ……9

8. Հետազոտության ընթացքը ……12

9. Եզրակացություն ……16

10. Գրականության ցանկ ……18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Նա, ով ցանկանում է երեխային լավ դաստիարակել,դատապարտված է մշտապես հետևելու արդարամիտ հայացքների»

Բալզակ

«Ինչու՞ ես ատեմ երեխային այսօրվա վատի համար,ես նրան կսիրեմ այն լավի համար,ինչը նրա մեջ դաստիարակելու եմ վաղը»։

Վ.Ա.Սուխոմլինսկի

Հայ ժողովրդի համար ընտանիքը սրբություն է, ավանդույթների, սովորությունների, մշակույթի, դաստիարակության և այլ բազմաթիվ հատկանիշների կրողն ու փոխանցողը։Այն երեխայի կյանքում հասարակական առաջին աստիճանն է և մեծ տեղ ու դեր է զբաղեցնում նրա դաստիարակման,կայացման հարցում։Դեռևս հին ժամանակներից երեխաների դասատիարակության գործում առաջնությունը տրվում էր ուսուցիչներին՝ անտեսելով սովորողի ընտանեկան կրթական միջավայրի առանձնահատկությունները։Այժմ ,երբ երեխայի հետ փոխգործակցության օպտիմալ մոդելը ուղղված է անձին, ուսումնական հաստատությունում կրթական ծրագրերը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով սովորողի անհատականությունը։Իսկ ինչպես հայտնի է անհատականությունը ձևավորվում է ընտանիքում,քանի որ երեխան իր ժամանակի մեխ մասն անցկացնում է ընտանիքում և նրա զարգացման վրա մեծ աղդեցություն ունի ընտանեկան միջավայրը։Շատ հաճախ կարելի է կարծիք լսել,որ ամեն ինչ ընտանիքից է գալիս։Սա իսկապես այդպես է։ Հիմնական բնավորության գծերը կամ գենետիկորեն դրված են,կամ ձևավորվում են ծնողների ազդեցության տակ մանկության տարիներին։Բայց դա չի նվազեցնում դպրոցի դերը անհատի ձևավորման և դաստիարակության գործում։Այն սերմերը,որոնք ցանվել են ծնողի կողմից,կարող են հավասարապես ծիլ չտալ կամ բողբոջել դպրոցական միջավայրում՝դասարանի թիմի,ուսուցիչների և դասղեկի ազդեցությամբ։Այդ իսկ պատճառով պետք է իրականացնել համագործակցություն ուսուցչի և սովորողի ընտանիքի հետ։Այսօր այդ համագործակցությունը դառնում է ավելի արդիական և պահանջված։Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը իրենից ներկայացնում է

նպատակաուղղված և երկարատև աշխատանք,որն էլ իր հերթին ենթադրում է գործողությունների մի ամբողջական համակարգ՝ուղղված սովորողի կրթական կարիքների ու պահանջմունքների վերլուծությանն ու բարելավմանը։Ուսուցչի և սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի հետ համագործակցությունը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով բարձր մարդկային որակները, էթիկայի նորմերը։ԵՎ ինչպես ասել է ռուս մեծ մանկավարժ Սուխոմլինսկին.

«Ընտանիքում արմատներ են գցվում, որոնցից հետո աճում են ճյուղեր, ծաղիկներ և պտուղներ։Դպրոցի մանկավարժական իմաստությունը կառուցված է ընտանիքի բարոյական առողջության վրա»։

ԾՆՈՂԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ծնողավարությունը սոցիալ-հոգեբանական երևույթ է, որն իրենից ներկայացնում է սեփական անձը որպես ծնող ընկալելու պատկերացումների ու համոզմունքների համակարգ՝հուզական և իմացական երանգավորմամբ և դրսևորվում է ծնողավարությունն իրականացնող բոլոր վարքային էպիզոդներում:Ծնողավարությունն իր մեջ ներառում է.

- Ընտանեկան արժեքներ ամուսինների արժեքային կողմնորոշում
- Ծնողական դիրքորոշում և սպասումներ
- Ծնողական հարաբերություններ
- Ծնողական զգացմունքներ
- Ծնողական դերեր
- Ծնողական պատասխանատվություն
- Ընտանեկան դաստիարակության նոր ոճ

Ծնողավարությունը վառ և ցայտուն կերպով դրսևորվում է նաև դպրոցական իրավիճակներում և միջավայրում,որտեղ երեխայի անձի ձևավորման ,ինչպես նաև երեխա-ծնող,ուսուցիչ-ծնող առողջ փոխհարաբերությունների ստեղծման համար շատ կարևոր են և՛ ընտանեկան արժեքներն ու դաստիարակության ոճը,և՛ ծնողների միջև հարաբերությունները,նրանց դերերն ընտանիքում, զգացմունքներն ու պատասխանատվությունը,դիրքորոշումն ու սպասումները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս հետազոտության արդիականության համար հիմք է հանդիսացել կյանքի՝ մարտահրավերներով լի ժամանակակից շրջափուլում սովորողի կրթական կարիքների ապահովման,ինչպես նաև դաստիարակության և 21-րդ դարին համապատասխան անհատ ձևավորելու շրջանակներում ծնող-ուսուցիչ հաստատուն կապի անհրաժեշտությունը,որն ունակ է մեծապես ազդել սովորողի ուսումնարության որակի բարձրացման վրա: Մեծաքանակ աշակերտներով դասարաններում ժամանակի սղության պատճառով հնարավոր չի լինում անհրաժեշտ ուշադրություն դարձնել, բավարար լրպեներ տրամադրել այս կամ այն

աշակերտի գիտելիքների հիմնովին ստուգմանը՝ անկախ նրա առաջադիմությունից, ակտիվությունից. . . Ինչպես նաև հնարավոր չի լինում լիարժեք ժամանակ հատկացնելը անհատական զրույցներին, կարծիքների փոխանակմանը, տեսակետների արտահայտմանը: Այստեղ է, որ առաջին պլան է մղվում ուսուցիչ-ծնող փոխհամագործակցությունը՝ միասնական ուժերով վատթարագույն տարաբնույթ երևույթները արմատախիլ անելու և,գոնե, դրական անհրաժեշտ նվազագույնը սերմանելու նպատակով:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

- Կապ ստեղծել դպրոցի ր սովորողի ծնողի միջև
- Ներգրավել ծնողին դպրոցական գործընթացին, համագործակցել ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ժամանակ, ներգրավել դասարանական, համադպրոցական, արտադասարանական միջոցառումներին:
- Բարենպաստ պայմաններ ստեղծել սովորողի լիարժեք սոցիալական զարգացման, դաստիարակության ր կրթության համար:
- Ցույց տալ ծնող-ուսուցիչ արդյունավետ փոխգործակցության դրական ազդեցությունը սովորողի կրթության և դաստիարակության գործընթացում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

- Ինչպես ներգրավել ծնողներին միջին և ավագ դպրոցներում ուսումնադաստիարակչական խնդիրների լուծման պրոցեսին:
- Ինչպես ներգրավել ծնողներին իրենց երեխաների կրթությանը վերաբերող հարցերի մասին որոշումներ կայացնելու գործին:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Հին աֆորիզմում ասվում է .

«Երեխաների հետ աշխատելու ամենադժվարը նրանց ծնողների հետ աշխատելն է»։

Ընտանիքը, որպես կրթական կոլեկտիվ, ունի մի շարք առանձնահատկություններ։ Առաջին հերթին այն կոլեկտիվ է՝ միավորված ոչ միայն ընդհանուր նպատակով, այլև ազգակցական կապերով։ Ծնողական զգացմունքները, ծնողական սերը մի տեսակ կատալիզատոր են, որն արագացնում է անձի զարգացումը։ Սա համեմատաբար կայուն թիմ է, որտեղ շփումը տեղի է ունենում անընդհատ, հնարավոր ամենալայն տարածքներում,տարբեր գործողություններում։

Ընտանիքում է դրվում և ապահովվում անհատականության կարևորագույն գծերի դաստիարակությունը։Դրանում սովորողը ստանում է աշխարհի մասին առաջին պատկերացումները, այստեղ ձևավորվում է հասկացությունների հայացքների, զգացմունքների, սովորությունների ֆոնդը, որն ընկած է անհատի բարոյական ձևավորման հիմքում։ Միայն ընտանիքում է հնարավոր ստեղծել և վերարտադրել իսկապես ազգակցական հարաբերությունների մշակույթ, տիրապետել սոցիալական կարևորագույն դերերին, ձևավորել մշակույթ,հարստացնել բարոյական փորձը։

Ընտանիքը կոչված է ապահովելու երեխայի կյանքի ողջամիտ կազմակերպումը, օգնելու յուրացնել ավագ սերունդների կյանքի ու աշխատանքի դրական փորձը,կուտակել գործունեության,սովորությունների, հարաբերությունների արժեքավոր անհատական փորձ։

Ծնողների հետ փոխգործակցությունը դպրոցի և յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքում հրատապ և բարդ խնդիրներից է։

Շատ բան կախված է ուսուցչի ինտուիցիայից, հմտությունից, ով պետք է վերլուծի տարբեր հանգամանքների համալիրը, որպեսզի ճիշտ որոշում կայացնի որոշակի իրավիճակում ծնողների և սովորողի հետ շփվելու մեթոդների և միջոցների ընտրության հարցում։

Ծնող –ուսուցիչ կապի պահպանումը ուսումնական գործընթացում աշակերտի հաջողության բանալին է, իսկ ծնողների և դպրոցի միջև կապի բացակայությունը ,ինչպես նաև դպրոցի և ծնողների չհամաձայնեցված գործողությունները վնասում են

երեխայի կրթությանն ու դաստիարակությանը: Ծնողների ներգրավումը իրենց երեխաների կրթության գործում արժեքավոր ներդրում է ցանկացած ծրագրի համար:Ընտանիքին յուրաքանչյուր երեխայի կրթության իմաստալից մասը դարձնելու համար ուսուցիչը պետք է.

- ծնողներին դիտի որպես գործընկերներ
- կանոնավոր կերպով հաղորդակցվի նրանց հետ
- հրավիրի ընտանիքներին իրենց մասնակցությունը բերելու ծրագրին
- ընդլայնի աջակցությունը ընտանիքներին՝տնային պայմաններում ուսմանը նպաստելու նպատակով
- աջակցի ընտանիքներին ռեսուրսներից և ծառայություններից օգտվելու հարցում

Արդյունքում սովորողը կլինի ուշադրության կենտրոնում,կլինի կառավարելի և որոշակի խնդիրների առկայության դեպքում հեշտությամբ կլուծի իր առջև ծառացած խնդիրները: Ուսուցիչը կարող է նաև համագործակցության արդյունքում օգնել սովորողի ծնողին ցանկացած կոնֆլիկտային իրավիճակներում:

«Ծնողների ներգրավվածություն» տերմինը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավմանը ինչպես տանը, այնպես էլ դպրոցում:Երբ ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր առաջադիմություն,այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, սովորողի մոտ զարգանում է սոցիալական շատ կարևոր հմտություններ և նրա վարքը դրական է դառնումինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք շատ կարևոր գործոններ են , որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում: Ծնողները տեղեկացված են լինում իրենց երեխաների կրթական կարիքների մասին և խրախուսում են ներգրավվելը:Ծնող-դպրոց կապը ավելի կամրապնդվի, եթե հաճախակի հրավիրվեն ծնողական ժողովներ, հանդիպումներ, խորհրդատվություններ, տարբեր հետաքրքրքշարժ միջոցառումներ:

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ծնողական ժողովը ուսուցիչ-ծնող փոխադարձ համագործակցության ավանդական ձև է։ Ծնողական ժողովները կարող են լինել.

- համադպրոցական
- դասարանական
- թեմատիկ
- կազմակերպչական

ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ—Այս ժողովների ժամանակ հրավիրվում են դպրոցի բոլոր սովորողների ծնողները և քննարկում են այնպիսի հարցեր,որոնք վերաբերվում են բոլորին և ունեն համադպրոցական նշանակություն։ Այստեղ առավել կարևոր է շեշտը դնել համադպրոցական հարցերի քննարկման , արտադասարանական աշխատանքների մեջ ծնողների ներգրավվածության վրա՝ հաշվի առնելով նրանց կարծիքն ու նրանց տալով ընտրության հնարավորություն։

ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ—Այս ժողովների ժամանակ հանդիպում են ուսումնական գործընթացի երկու կողմերը՝մանկավարժներ և ծնողներ, որպեսզի քննարկեն և լսեն միմյանց երրորդ կողմի՝ սովորողի խնդիրները։ Դասրանական ծնողական ժողովները կազմակերպվում են դասղեկների կողմից և հիմնականում դասարանում սովորողների առաջադիմությունը քննարկելու և ամփոփելու նպատակով։ Որոշ ծնողներ, ծանոթ լինելով իրենց երեխայի ցածր առաջադիմությանը,խուսափում են մասնակցել ծնողական ժողովներին, ինչը որ ինքնին շատ սխալ մոտեցում է։Երբեմն դրանք վերածվում են «լավ և վատ» գնահատականներ ունեցող սովորողներին գովելու կամ նախատելու գործընթացի, որն էլ իր հերթին շատ հաճախ ավարտվում է ծնողների դժգոհությամբ։ Նման դեպքերում պետք է խուսափել և թույլ չտալ ներքոհիշյալ սխալները.

- Համեմատել մի սովորողին մյուսի հետ
- Բացասական գնահատական տալ ողջ դասարանին
- Գերագնահատել որևէ առարկայի կարևորությունը
- Նախատել որևէ ծնողի բոլորի ներկայությամբ

Սովորողի դաստիարակության գործընթացում համար մեկ աղդեցիկ ուժը՝ սեփական օրինակն է,թե՛ ուսուցչի, թե՛ ծնողի: Ուսումնասիրելով ծնողական ժողովների դերն ու կարևորությունը ուսուցիչ-ծնող փոխադարձ համագործակցության տեսանկյունից շատ կարևոր է, որ ծնողական ժողովները պարտադիր կազմակերպվեն նախապես մշակված պլանով, որը պետք է հետաքրքիր, արդիական լինի ծնողների համար: Նշեմ մի քանի կանոններ, որոնք առաջարկում եմ կիրառել ծնողական ժողովների ժամանակ.

- Ծնողական ժողովները պետք է հրավիրել ծնողներին հարմար և նրանց հետ համաձայնեցված ժամանակին
- Ծնողները պետք է ծանոթ լինեն ժողովի օրակարգին
- Ծնողական ժողովի օրակարգը պետք է լինի հրատապ և տեղին
- Ծնողների և դասղեկի շփումը պետք է լինի անմիջական՝ էթիկայի կանոնների պահպանմամբ
- Ծնողական ժողովը պետք է լինի մանկավարժորեն լավ նախապատրաստված
- Ծնողական ժողովը պետք է սկսել լավ տրամադրությամբ և մեկ ու նես ժամից ավելի չպետք է տևի
- Նախ պետք է խոսել դրական հարցերի շուրջ , հետո նոր անցնել բուն խնդիրների քննարկմանը
- Ծնողը պետք է համոզվի, որ դպրոցը պատրաստ է աջակցել իրեն՝ օգնելու իր երեխային
- Դասղեկը պետք է լինի անաչառ, բարյացկամ և ունենա մանկավարժական տակտի զգացում:

Որպեսզի ծնողական ժողովը լինի արդյունավետ և ծառայի իր նպատակին, անհրաժեշտ է այն կազմակերպել երեք փուլով:

I փուլ –նախապատրաստում

- Ժողովի նպատակի ընտրություն
- Մասնակիցների կազմի ընտրություն
- Սովորողների առաջադիմության թերթիկի նախապատրաստում

- Դասասենյակի ձևավորում
- Իրազեկում

II փուլ-անցկացում

- Դասարանի աշակերտների առաջադիմության վերլուծություն
- Դասարանում տիրող սոցիալ-հոգեբանական մթնոլորտի ներկայացում
- Հոգեբանա-մանկավարժական խորհրդատվություն
- Կազմակերպչական աշխատանքների քննարկում

III փուլ-արդյունքների ամփոփում

- Կայացնել եզրակացություններ
- Կայացնել որոշումներ
- Ճշտել ծնողների կարծիքը ժողովի մասին՝նախօրոք նախապատրաստելով հարցաթերթիկներ ծնողների գնահատականների, առաջարկությունների, հարցերի վերաբերյալ:

Ծնողական ժողովի արդյունքների մասին անհրաժեշտ է տեղեկացնել տնօրինությանը:

Որպեսզի ուսուցիչ-ծնող-սովորող փոխադարձ համագործակցությունը ավելի մտերմիկ և ընկերական երանգ ստանա, կարելի է կազմակերպել համատեղ արշավներ, էքսկուրսիաներ կամ հանրօգուտ աշխատանքներ:

ԹԵՄԱՏԻԿ ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ-Այս ժողովներն անցկացվում են որևէ կոնկրետ թեմայով, որն ունի առաջնահերթ կարևորություն տվյալ պահին:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ նպատակն է հաշվի առնելով ծնողների կարծիքներն ու տալով նրանց ընտրության հնարավորություն, համատեղ լուծել դասարանում մի շարք կազմակերպչական խնդիրներ:Այդպիսի խնդիրները կարող են լինել տարբեր բնույթի: Օրինակ՝ դասարանական միջոցառումների, էքսկուրսիաների, արշավների, զբոսանք բնության գրկում, դասարանական ցերեկույթների կազմակերպում, դասասենյակի, միջանցքիկամ որևէ վահանակի

ձևավորում և այլն։Երբ կազմակերպչական աշխատանքները։ Նմանատիպ ակտիվ աշխատանքներում ծնողների ներգրավվածությունը առավել դրական է ազդում սովորող- ուսուցիչ-ծնող փոխադարձ համագործակցության վրա և ստեղծում շատ հաճելի և դրական մթնոլորտ։սովորողները նույնպես մեծ ոգևորությամբ և աշխուժությամբ են մասնակցում կազմակերպչական աշխատանքներին։ Իրենց կարծիքն ու ճաշակը հաշվի առնելու դեպքում՝ առավել մեծ պատասխանատվությամբ են մոտենում յուրաքանչյուր հարցին։

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Տարիների աշխատանքային փորձը ցույց է տվել, որ տարրական դպրոցում ծնողները ավելի են ներգրավված ուսումնական գործընթացին, հաճախակի ինքնակամ այցելում են դպրոց, դպրոց- ծնող- ուսուցիչ կապն ավելի ամրապնդված է, քան միջին և ավագ դպրոցներում։ Միջին և ավագ դպրոցում ներգրավվածությունը մեծացնելու համար մշակեցի հատուկ ռազմավարություն, որը ծնողին կկապի դպրոցի հետ։ Ռազմավարությունը հետևյալն է՝ հաճախակի հրավիրել ծնողական ժողովներ, կազմակերպել էքսկուրսիաներ ծնողների և սովորողների մասնակցությամբ։

1. Հրավիրվեց համադպրոցական ծնողական ժողով,որտեղ քննարկվեցին համադպրոցական հարցեր։ Եվս մեկ անգամ ծնողներին ներկայացվեց դպրոցի ներքին կանոնադրությունը, ծնողների և սովորողների իրավունքներն ու պարտականությունները։ Ժողովիվ մեկ շաբաթ անց ամենօրյա դիտարկումների արդյունքում արձանագրեցինք, որ աշակերտները հաճախում են դպրոց աշակերտին վայել տեսքով, ներգրավված են դպրոցական առօրյային։

2. Համադպրոցական ծնողական ժողովից տաս օր անց հրավիրվեց դասարանական ծնողական ժողով։ Ժողովին հրավիրված էին դասավանդող ուսուցիչները, փոխտնօրենը, հոգեբանը։ Քննարկվեցին աշակերտների առաջադիմության խնդիրները։ Քանի որ տարեվերջին պետք է հանձնեն փոխադրական քննություններ, ուստի այս ուստարում առավել սերտ պետք է լինի ծնողների կապը դպրոցի հետ։ Կազմակերպվեցին և անցկացվեցին զրույցներ

հոգեբանի մասնակցությամբ, քանի որ դասարանում դասարանում կար նաև համերաշխ կոլեկտիվ ձևավորելու խնդիր։

Ժողովն անցկացվել է՝ պահպանելով բոլոր կանոնները.

Նախապատրաստական փուլ.

- ✓ Վեր հանել դասարանի խնդիրները
- ✓ Հրավիրել ժողովի մասանակիցներին

Անցկացում.

- ✓ Դասղեկը ներկայացրեց դասարանի խնդիրներն ու պահանջները
- ✓ Դասղեկը ներկայացրեց դասարանում տիրող սոցիալ-հոգեբանական մթնոլորտը

Անցկացվեց հոգեբանա-մանկավարժական քննարկում և խորհրդատվություն։

Ծնողները որոշեցին սերտ կապի մեջ լինել դպրոցի, մանկավարժների հետ։Առաջարկեցին սահմանել հերթապահություն և պարբերաբար այցելել դպրոց և հետևել աշակերտների առօրյային, տեղեկանալ բացթողումներին և գտնել լուծման եղանակներ։ Առաջարկեցին նաև անցկացնել հոգեբանական զրույցներ ծնողների մասնակցությամբ։ Կազմակերպվեց 10–օրյա վերահսկողություն ծնողների, հոգեբանի, դասղեկի և ուսուցչի օգնականների կողմից։ Դասղեկի ժամերին հիմնական շեշտը դրվեց միասնական կոլեկտիվ ունենալու վրա։ Դասղեկն անցկացրեց զրույցներ ներողամտություն, հանդուրժողականություն թեմաներով։ Դասերից հետո կազմակերպվեցին խաղեր, որին մասնակցում էին բոլորը և սովորեցին, թե ինչպես պետք է աշխատել թիմով՝ «Մեկը բոլորի համար, բոլորը՝ մեկի» սկզբունքով։ Սովորեցին նաև կարողանալ օգնել թույլ, ետ մնացող աշակերտներին,ինչպես նաև յուրաքանչյուրին ընդունել այնպես, ինչպիսին կա՝ տեսնելով յուրաքանչյուրի դրական կողմերը։

Տասնօրյակն ամփոփվեց թեմատիկ ծնողական ժողովով։

Թեման—Առողջ կոլեկտիվ

Պատրաստվել էին հարցաթերթիկներ թե՛ ծնողների,թե՛ սովորողների համար։

Աշակերտներ.

1. Ո՞րն է առողջ կոլեկտիվ ունենալու կարևորությունը։
2. Ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկվեն առողջ կոլեկտիվ ունենալու համար։
3. Ի՞նչ է ընկերությունը։
4. Ինչի՞ ես պատրաստ հանուն ընկերության։

Ծնողներ.

1. Զրուցե՞լ եք արդյոք ձեր երեխաների հետ ընկերասիրություն թեմայով։
2. Բացատրե՞լ եք արդյոք ձեր երեխային փոխզիջման մասին։
3. Պատրա՞ստ է արդյոք ձեր երեխան գնալ փոխզիջման։
4. Ընդունու՞մ եք ,որ երեխայի համար օրինակ է իր ընտանիքը։
5. Տեղյա՞կ եք արդյոք ձեր երեխաների ընկերական հարաբերություններից։

Հարցաթերթիկների լրացումից հետո կատարվեց արդյունքների քննարկում։

Ընկերասիրության և փոխզիջման վառ օրինակ ունենալու նպատակով որոշվեց կազմակերպել էքսկուրսիա ծնողների մասնակցությամբ։Այն կլինի ուսուցողական, ինչպես նաև աշակերտները իրենց ծնողների օրինակով կտեսնեն իրական և անկեղծ շփում։

Կազմակերպվեց ծնողական ժողով, որի ժամանակ կատարվեց աշխատանքի բաժանում։ Հաշվի առնվեց աշակերտների կարծիքը։ Էքսկուրսիայի վայր ընտրվեց Գյումրին։

Էքսկուրսիան կազմակերպվեց շատ լավ, թե՛ աշակերտները, թե՛ ծնողները մեծ բավականություն ստացան։ Մեջբերեմ աշակերտների և ծնողների արտահայտած մտքերից մի քանիսը.

- Շփման արդյունքում ավելի լավ ճանաչեցինք իրար

- Ճանաչեցինք մեր երեխաներին նորովի
- Ծնողներով ավելի լավ ճանաչեցինք միմյանց, դարձանք մի ընտանիք, այս կարճ ժամանակում ապրեցինք մեկս մյուսի հոգսով և ուրախությամբ
- Կուղենանք որ այս համագործակցությունը և ուշադրությունը շարունակվեր ամբողջ տարվա ընթացքում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Մեր երեխաները մեր ծերությունն են։ Ճիշտ դաստիարակությունը մեր երջանիկ ծերությունն է, վատ դաստիարակությունը՝ մեր ապագա վիշտը, մեր արտասուքները, դա մեր հանցանքն է մյուս մարդկանց առջև, ամբողջ երկրի առջև։ Ուրեմն կարողանանք ձևավորել կյանքի լայն իմացություն և տաղանդ, կարողանանք ճիշտ դաստիարակության միջոցով դաստիարակել և կերտել երկրի, ինչու չէ նաև աշխարհի ապագա պատմությունը»։

Ա. Ս. Մակարենկո

Այս հետազոտության արդյունքում ինձ համար առավել պարզ դարձավ,որ երբ ծնողը ակտիվ և փոխադարձ համագործակցում է ուսուցչի հետ, ապա այդ համագործակցությունից սովորողի մոտ բարձրանում է զարգացվածության, պատրաստակամության, վստահելիության մակարդակը։ Սովորողների մոտ զարգանում են սոցիալական կարողունակություններ և նրանց վարքը դառնում է դրական ինչպես դպրոցում, այնպես էլ տանը։ Ուստի և՛ ծնողը, և՛ ուսուցիչը անընդհատ, փոխադարձ համաձայնությամբ պետք է թարմացնեն համագործակցության մեթոդները և կիրառեն նոր հմտություններ՝ սովորողի մոտ դրական տեղաշարժ ունենալու համար՝ թե՛ միջանձնային, թե՛ ուսման, թե՛ վարքի։ Կողմերի համագործակցությունը պետք է հիմնված լինի մարդկային բարձր ու բարոյական որակների վրա։ Այստեղ չի կարելի ստորադասել որևէ կողմի գործառույթները։

Հարկավոր է հաճախակի ծնողական ժողովներ իրականացնել, որպեսզի հնարավոր լինի մշտադիտարկել կրթական հնանավոր խնդիրներն ու սովորողների՝ տարիքային առանձնահատկություններով պայմանավորված վարքային շեղումներն ու գտնել միասնական լուծման տարբերակներ։

Վերջում կառանձնացնեմ այն բոլոր «օգուտները», որոնք ստանում են ուսուցիչ-ծնող-դպրոց փոխադարձ համագործակցության ընթացքում, յուրաքանչյուրն իր հերթին.

ՕԳՈՒՏ ՍՈՎՈՐՈՂԻՆ

- Անկախ սովորողի սոցիալ-տնտեսական կարգավիճակից, երբ ծնողն ու ուսուցիչը փոխադարձ համագործակցում են, սովորողի մոտ բարձրանում է նոր ձեռքբերումների մակարդակը
- Սովորողն ավելի դրական է տրամադրվում դպրոցի հանդեպ
- Մեծանում է վստահությունը սեփական անձի և ապագայի հանդեպ

ՕԳՈՒՏ ԾՆՈՂԻՆ

- Սկսում է ավելի շատ հասկանալ և ճանաչել իր երեխային
- Սկսում է ավելի շատ ուշադրություն դարձնել երեխայի սոցիալական և մտավոր զարգացման վրա
- Ավելի շատ ուշադրություն է դարձնում իր սեփական գիտելիքները թարմացնելու և զարգացնելու վրա, աշխատում է զարգացնել նոր հմտություններ
- Սկսում է ավելի վարժ և վստահ տիրապետել իր երեխայի վիճակի մասին տեղեկատվությանը և ժամանակին է լուծում խնդիրը՝ ուսուցչի հետ միասին

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՅՈՒ. Ա. Ամիրջանյան , Ա. Ս. Սահակյան «Մանկավարժություն» 2005

2. Ռ. Մուրադյան « «Դասղեկ» մեթոդական ձեռնարկ,Երևան 2007

3. Մ. Մելքումյան «Մակարենկոն ընտանեկան դաստիարակության մասին», Երևան 1985

4. ԿԱԻ «Դաստիարակչական աշխատանքը դպրոցում», Երևան 2012